



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ**

Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը  
առարկայի դասավանդման ընթացքում

**ԱՌԱՐԿԱ**

Մաթեմատիկա

**ՀԵՂԻՆԱԿ**

Գասպարյան Աիդա

**ՄԱՐԶ**

Շիրակ

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ**

Գետքի միջնակարգ դպրոց

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ	3
ԵԶՐԱԿԱՑՈՓԻԹՅՈՒՆ	12
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	13

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության կազմակերպման այժմեական խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր աշակերտները, և ոչ թե միայն նրանց մի մասը: Սակայն սովորողների ակտիվության բարձրացումը ինքնաբերաբար լինել չի կարող: Որպեսզի բոլոր աշակերտները կարողանան մասնակցել ուսումնական գործընթացին, անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում ստեղծի համապատասխան իրադրություն և ապահովի անհրաժեշտ պայմաններ:

**Արդիականություն:** Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Այս առումով թեման արդիական է:

**Հետազոտության նպատակն** է ուսումնասիրել և վերլուծել կրթության բնագավառը, քանզի պետք է անհատին ոչ միայն գիտելիքներով զինել, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորել: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել:

Նպատակին հասնելու համար մեր կողմից առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

1. Ուսումնասիրել անհատի բազմակողմանի զարգացման մեթոդները:
2. Կիրառել տվյալ մեթոդները անհատի արժեհամակարգի ձևավորման ընթացքում :

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Այն կազմում է համակարգչային 13 էջ:

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Սովորողների դաստիարակության իրականացումը միշտ էլ եղել ու մնում է կրթության կարևորագույն խնդիրներից մեկը: Բարոյական արժեքները կազմում են մարդու արժեքային համակարգի կարևորագույն մասը: Իսկ որտե՞ղ պետք է ձևավորվեն այդ արժեքները՝ ընտանիքում, եկեղեցում, թե՞ դպրոցում: Հետազոտողները, կարևորելով բոլոր այս օղակների դերը, կանգ են առնում նաև վերջին օղակում՝ հանրակրթական դպրոցում արժեքների ձևավորման խնդրի վրա<sup>1</sup>:

Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող բովանդակություն:

Կրթության բովանդակությունը նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը: Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին:

Ուսումնական գործունեության արդյունավետությունը առավելապես կախված է նրա նկատմամբ սովորողների վերաբերմունքից: Երեխաները գործունեության նոր տեսակ սովորելու կձգտեն հատկապես այն դեպքում. երբ բավականություն զգան դրանից, երբ հասկանան, որ դա անհրաժեշտ է, որպեսզի հասնեն իրենց կողմից կարևոր համարվող նպատակների: Օրինակ, երբ երեխաները տեսնում են, որ համակարգիչը խաղերի անսահմանափակ հնարավորություններ է ընձեռում, ձգտում են համակարգիչ սովորել, որպեսզի խաղալու հաճույք ստանան, կարևոր է, որ ստեղծեն այնպիսի դրական շարժառիթներ, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական գործունեության:

<sup>1</sup> Չ.Ուայթ, Քաղաքացիական կրթության բարոյական տեսանկյունը. սովորություն՝ և, թե՞ զիտակցական ընտրություն: Մարդ և հասարակություն, N1, 2010:

Նկատի ունենալով, որ բարենպաստ դրդապատճառների ձևավորումը ուսուցման առաջնային պայման է, ուսուցիչն այդ տեսանկյունից է բացահայտելու մաթեմատիկան, նրա յուրաքանչյուր թեմայի, անգամ յուրաքանչյուր դասի կրթական ներուժը:

Մեր կարծիքով բարոյական դաստիարակությունը պետք է իրականացնել ոչ թե աշակերտի վարքի մեջ այս կամ այն շեղումը նկատելիս համապատասխան խրատներ տալով, այլ յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում դաստիարակության բովանդակությունը կազմող արժեքների հետևողական ձևավորման միջոցով: Հարկ է նկատել, որ հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական առարկա ունի արժեքների ձևավորման համար անհրաժեշտ կրթական ներուժ:

Բարոյական արժեքների ձևավորման հսկայական ներուժ ունեն հանրակրթական դպրոցի «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառի առարկաները:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը կարևոր դեր ունի մտածողության, երևակայության, հիշողության, ուշադրության և հոգեկան այլ ուժերի ձևավորման և զարգացման գործում<sup>2,3</sup>:

Իսկ մարմնական ուժերի զարգացմանը մաթեմատիկայի ուսուցման գործընթացը հազիվ թե կարողանա նպաստել: Այն հավանաբար խոչընդոտում է այդ ուժերի զարգացմանը:

Ուսուցիչը կարող է նաև մաթեմատիկայի դասավանդման գործընթացում հասնել ուժեղ աշակերտների կողմից ավելի թույլ աշակերտների նկատմամբ անշահախնդիր օգնության կազմակերպման, ինչը բարեգործություն է և ծնում է երախտագիտության զգացում:

---

<sup>2</sup> Մ.Ա.Գանիբեյան, Վ.Հ.Միքայելյան, Հ.Ս.Միքայելյան, Հոգեկան երևույթները մաթեմատիկայի դասավանդման գործընթացում, 1. Ուշադրություն, Մաթեմատիկական դպրոցում, N5-6, 2000:

<sup>3</sup> Ա.Ա.Վազյան, Հիշողության երևույթը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, Մաթեմատիկական դպրոցում, N5-6, 2009:

Ուսուցիչը, նախ և առաջ, հմտորեն օգնելու է նման աշակերտներին, ձգտելով զարգացնել վստահություն, որ յուրաքանչյուր աշակերտ ի վիճակի է հանրակրթական մակարդակով մաթեմատիկա սովորել: Այդ նպատակին կարող է ծառայել, առաջին հերթին, համագործակցային ուսուցման և ինտերակտիվ մեթոդների օգտագործումը<sup>4</sup>:

Դասավանդման գործընթացը մեծապես կարիք ունի և լավագույնս կարող է ծառայել կարեկցանքի զգացմունքի դրսևորմանը, ինչը առանձնապես ակնառու է մաթեմատիկայի դասավանդման գործընթացում: Հիրավի, դպրոցական հասակի երեխայի համար ուրախության և վշտի ավելի մեծ աղբյուր, քան հաղթահարված, կամ չհաղթահարված նյութը՝ դասը, խնդիրը, վարժությունը, չեն կարող լինել: Թեորեմում արժարժված հատկության, նրա ապացուցման ընկալումը, դժվար խնդրի կամ վարժության լուծումը կարող են բերկրանք պատճառել աշակերտին: Իսկ չլուծված յուրաքանչյուր խնդիր՝ իր հետ վշտի ինչ-որ բաժին է բերում: Եվ այստեղ իրավիճակը սրվում է, որովհետև աշակերտի հաջողությունը կամ անհաջողությունը ի ցույց է տրվում ողջ դասարանին, ինչը մեծացնում է ուրախության կամ վշտի չափաբաժինը: Ուսուցիչը պարտավոր է կիսել թե՛ ուրախությունը, թե՛ վիշտը: Նա կարող է նաև այնպես կազմակերպել իր օգնությունը, որ մեծանա, բազմապատկի նման ուրախությունը կամ փարատվի առաջացած վիշտը: Որոշ դեպքերում կարող է ի ցույց չդնել աշակերտի ձախողումը և այլն և այլն:

Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել:

<sup>4</sup> Իրավիճակի լուսաբանման նպատակով, բերենք մի օրինակ՝ երգել սովորելը: Անշուշտ, երգիչ կամ երգահան դառնալու համար անհրաժեշտ է բնատուր կարողություններ: Այստեղ ուշադրություն պետք է դարձնել այն կարևոր պահի վրա, որ անվստահ մարդը ավելի ազատ է զգում խմբով երգելու, այլ ոչ թե մեներգ կատարելու դեպքում: Հենց այդ առումով էլ արդյունավետ է համագործակցային ուսուցումը:

Անշուշտ այս երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն: Առաջինը երբեմն զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում. երեխաները լսում են, թե որքան լավ բան է ազնվությունը, արդարությունը, տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն, սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտումն իրենց ուսուցիչների, ծնողների կամ շրջապատողների կողմից: Բնական է, որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում: Մյուս կողմից էլ՝ նոր մոտեցումը շատ ազատական է, և վտանգ կա, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը: Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական, պատմական հերոսների օրինակով, նաև ուսուցչի վարքագծով: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին:

Մյուս կարևոր սկզբունքն այն է, որ արժեքը պետք է սովորել ոչ թե լսելով, այլ կիրառելով: Ուստի պետք է նրանց հնարավորություն տալ կիրառելու իրենց սովորած արժեքը, այն ձեռք բերել իրենց իսկ փորձառության հիման վրա: Դրա համար, անշուշտ, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր, որոնք համապատասխանում են երեխաների տարիքին: Շատ կարևոր է նաև խրախուսանքը: Խրախուսելով երեխային կարելի է ոգեշնչել, մղել որոշակի գործողությունների, ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ամրապնդմանը:

Հաղորդակցական կարողության դրսևորումն այն է, որ կրտսեր դպրոցականը կարողանում է լսել, ընկալել, բանավիճել, համարժեք վերաբերմունք արտահայտել և տրամաբանված խոսք կառուցել:

Այս գործառույթներից յուրաքանչյուրն ունի որոշակի արժեքային ներուժ, որը բացահայտում է սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնական ուղղությունները:

Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման նպատակների համապատասխանությունը իր արտացոլումն է գտնում կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջներում: Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցումն ուղղված է հետևյալ հիմնական նպատակների իրականացմանը՝

1. Կրտսեր դպրոցականների իմացական զարգացում, մաթեմատիկայի վերաբերյալ գիտելիքների, ունակությունների, դրանց օրինաչափությունների ու փաստերի վերլուծության և ընդհանրացման փորձի ձևավորում:

2. Կրտսեր դպրոցականի մտքի զարգացում, նրանց մեջ տրամաբանության հիմնական տեսակների ձևավորում, խոսքային հաղորդակցման մշակույթի դաստիարակում, որն ընկալվում է իբրև երեխաների հաղորդակցում սոցիալական արժեքներին:

Կրտսեր դպրոցականների զարգացման իմացական-ճանաչողական և հաղորդակցական գործունեությունը նպաստում է նրանց իմացական ու սոցիալական արժեքների ձևավորմանը, իսկ բարոյական և գեղագիտական արժեքները հիմնականում ձևավորվում են ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական նյութերի ուսուցման ընթացքում: Ընդհանուր առմամբ արժեքային համակարգի ձևավորումը երեխաների մոտ, նպատակ ունի ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

1. Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:

2. Հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:

3. Գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:



4. Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը:

5. Կարևոր բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ:

6. Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը:

7. Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք:

8. Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը.

9. Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ.

10. Անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը.

11. Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը.

12. Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը, զագացնելով սովորողի հոգեկան որակները, ինտելեկտուալ կարողությունները, մասնագիտական լիարժեք գործունեություն կատարելու հնարավորությունները, մեծացնում է նաև հարգանքը նրա նկատմամբ: Սակայն սխալ կազմակերպելու դեպքում սովորողների մի զգալի մասի մոտ մաթեմատիկայի ուսուցման գործընթացը կարող է առաջացնել մի կողմից սեփական թերարժեքության բարդույթ, ինչը դեմ է ինքն իր հանդեպ հարգանքի պարտքին: Մյուս կողմից սովորողի ոչ լիարժեք վերաբերմունքը կամ

մասնակցությունը ինտելեկտուալ կարևոր նշանակություն ունեցող ուսումնական գործընթացին նվազեցնում է ուրիշների հարգանքը իր նկատմամբ, ինչը դեմ է հարգանքի պարտքին:

Այս տեսակետից չափազանց ուսուցչի վերաբերմունքը առանձնապես այն աշակերտների նկատմամբ, որոնք մաթեմատիկական հակումներ և ունակություններ չեն ցուցաբերում: Մի անգամ ևս արժե հիշել, որ «Մաթեմատիկա» ուսումնական առարկայի նպատակը ոչ մաթեմատիկայի ուսուցումն է, այլ մաթեմատիկայի միջոցով կրթության կազմակերպումը: Նման մոտեցումը իրականացնելու դեպքում ուսուցիչը յուրաքանչյուր թեմայի ուսուցման մեջ կգնտի աշակերտներից յուրաքանչյուրին անհրաժեշտ կրթական բաժինը:

Սակայն մաթեմատիկական կրթության ոչ ճիշտ կազմակերպումը կարող է նաև ունենալ բացասական ազդեցություն մարդկային արժանապատվության ճանաչման, մարդու նկատմամբ հարգանքի ձևավորման գործում: Դա տեղի է ունենաում, երբ մաթեմատիկայի դասավանդման գործընթացը վեր է ածվում մաթեմատիկայի ուսուցման, ինչը պահանջում է մաթեմատիկական հատուկ ընդունակություններ, որով օժտված են ոչ բոլոր աշակերտները: Նման դեպքերում մաթեմատիկական ընդունակություն ունեցող աշակերտը մեծամտանում է, արհամարում անընդունակին, չի հարգում նրան, իսկ անընդունակի մոտ ձևավորվում թերարժեքային բարդույթ, ինչը հանգեցնում է սեփական արժանապատվության անտեսման, իր նկատմամբ հարգանքի նվազման և նախանձի՝ ընդունակ աշակերտների նկատմամբ: Հանրահայտ շախմատիստ և շախմատային մարզիչ Հովիկ Խալիկյանը, ով մարզել է Էվելինա Դանիելյանին, Լևոն Արոնյանին և այլ նշանավոր շախմատիստների, պատմում էր, որ ինքը ժամանակին Երևանի հանրակրթական դպրոցներից մեկում փորձական կարգով շախմատը մտցրել է որպես ուսումնական առարկա և կարճ ժամանակում արժանացել բարձր գնահատականի, անգամ «Պրավդա» թերթն է անդրադարձել նրա գործունեությանը: Սակայն շախմատային մտածողությունը հատուկ լինելով միայն առանձին աշակերտների, դասարանում առաջացրել է այն անառողջ մթնոլորտը, որի մասին խոսվեց վերևում: Եվ ճշմարիտ ուսուցիչը, երեխաների դաստիարակությունը

սեփական հաջողությունից ավելի բարձր գնահատելով, հրաժարվել է այդ դասերը շարունակելուց:

Անշուշտ, հեշտ չէ կազմակերպել դասավանդումը այնպիսի դասարանում, որում աշակերտները գտնվում են ուսումնառության տարբեր մակարդակներում: Համաձայնեցված ուսուցման պայմանի կարևորությունն էլ կապված է հենց այն բանի հետ, որ դասարանները մեծ մասամբ համալրված են լինում բազմամակարդակ սովորողներից: Ավելին, կրթության կազմակերպման հիմնարար խնդիրներից մեկը հենց այդպիսի դասարանում ուսումնառության կազմակերպման արդյունավետ եղանակների ներդրումն է: Այնուամենայնիվ, քիչ չեն այն ուսուցիչները, ում հաջողվում է որոշակիորեն հաղթահարել այդ դժվարությունը: Նրանք դասարանի տարբեր մակարդակ ունեցող աշակերտների համար ընտրում են այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են նրանց կարողություններին:

## Արժեքային համակարգ

*/մաթեմատիկայի օրինակով/*

- գիտակցել ճշգրիտ գիտելիքների կարևորությունը, առօրյա կյանքում դրանց կիրառության արդյունավետությունը,
- կարևորել խոսքի հստակությունը և հակիրճությունը, գիտակցել ոչ խոսքային միջոցների գծապատկերների, նշանների և պայմանանշանների դերը հաղորդակցման մեջ,
- համոզմունքներ ունենալիս կարևորել փաստերի և փաստարկների առկայությունը, հետևությունների հիմնավորվածությունը,

- զգալ համաչափ ու ներդաշնակ պատկերների գեղեցկությունը, ձգտել ստեղծագործական աշխատանքների միջոցով գեղագիտական հաճույք ստանալ,
- գիտակցել մշակութային արժեքների ստեղծման մեջ մաթեմատիկական պատկերացումների դերը, ձգտել այդ արժեքները ընկալել, պահպանել և կատարելագործել,
- գնահատել ճշտապահությունը, ազնվությունը, պարտաճանաչությունը, ցուցաբերել դրանք պաշտպանելու պատասխանատվություն,
- կարևորել ուշադիր և կենտրոնացած աշխատանքը, իրատեսական նպատակներ և խնդիրներ դնել, ձգտել նպատակին հասնելու համար գորշադրել թույլատրելի միջոցներ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում», հանգեցինք հետևյալ եզրակացության:

1. Ուսումնասիրվել է անհատի բազմակողմանի զարգացման մեթոդները: Նշվել են սովորողների զարգացման մի քանի մեթոդներ: Կարևոր սկզբունք է նաև այն, որ արժեքը պետք է սովորել ոչ թե լսելով, այլ կիրառելով: Շատ կարևոր է խրախուսանքի մեթոդը:

2. Կիրառվել են տվյալ մեթոդները անհատի արժեհամակարգի ձևավորման ընթացքում: Մեթոդները կիրառվել են «Մաթեմատիկա» առարկայի շրջանակներում:

## ՕԳՏԱՏՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. [https://www.moj.am/storage/uploads/00.Ardir\\_6.pdf](https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf)
2. <https://forum.armedu.am>
3. Չ.Ուայթ, Քաղաքացիական կրթության բարոյական տեսանկյունը. սովորություն՝ և, թե՞ գիտակցական ընտրություն: Մարդ և հասարակություն, N1, 2010:
4. Մ.Ա.Դանիելյան, Վ.Հ.Միքայելյան, Հ.Ս.Միքայելյան, Հոգեկան երևույթները մաթեմատիկայի դասավանդման գործընթացում, 1. Ուշադրություն, Մաթեմատիկան դպրոցում, N5-6, 2000:
5. Ա.ԱՎազյան, Հիշողության երևույթը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, Մաթեմատիկան դպրոցում, N5-6, 2009: